Հրապարակային օֆերտա՝ 5 օր և ավել ժամկետանցման դեպքում մանրածախ և կորպորատիվ վարկերի տարեկան տոկոսադրույքի բարձրացման գործընթացի վերաբերյալ

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից որոշում է կայացվել բարելավել Բանկի այն վարկառուների վարկերի պայմանները, ում վարկային պայմանագրերում առկա է հետևյալ դրույթը.

«Կողմերը սույնով գիտակցում և ընդունում են, որ Վարկի տոկոսադրույքը սահմանվել է հաշվի առնելով Վարկառուի վարկունակությունը, պարտավորությունների պատշաճ կատարման նկատմամբ պատասխանատվությունը, և սույնով գալիս են համաձայնության առ այն, որ վարկի մարման ժամանակացույցով սահմանված կարգով Վարկառուի կողմից հետևյալ վարքագիծ դրսևորելու դեպքում Վարկի տարեկան տոկոսադրույքը միակողմանիորեն բարձրանում է հետևյալ կարգով.

1-ին, 2-րդ և 3-րդ անգամ Վարկառուի կողմից 5 օր և ավելի անընդմեջ Պայմանագրով սահմանված ժամկետում վարկի մարումներ չկատարելու դեպքում Վարկի տարեկան տոկոսադրույքը յուրաքանչյուր անգամ բարձրանում է 1 /մեկ/ տոկոսային կետով, ինչպես նաև Վարկառուի կողմից Բանկում և/կամ այլ բանկերում և/կամ վարկային կազմակերպություններում սուբյեկտիվ դասակարգմամբ վարկային պարտավորություններ ունենալու դեպքում Բանկն իրավունք ունի վարկի տարեկան տոկոսադրույքը միակողմանիորեն բարձրացնել և սահմանել մինչև Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով: Վարկատուն ծանուցում է սույն կետում կատարված փոփոխության մասին Վարկառուին՝ փոփոխությունից հետո 7-օրյա ժամկետում:»

Վերոնշյալ դրույթը բոլոր վարկային պայմանագրերում վերաշարադրվում է հետևյալ կերպ.

«Կողմերը սույնով գիտակցում և ընդունում են, որ Վարկի տոկոսադրույքը սահմանվել է հաշվի առնելով Վարկառուի վարկունակությունը, պարտավորությունների պատշաճ կատարման նկատմամբ պատասխանատվությունը, և սույնով գալիս են համաձայնության առ այն, որ 1-ին, 2-րդ և 3-րդ անգամ Վարկի մարման ժամանակացույցով սահմանված օրվանից հետո Վարկառուի կողմից 10 /տասը/ օր և ավելի անընդմեջ Պայմանագրով սահմանված ժամկետում վարկի մարումներ չկատարելու դեպքում Բանկն իրավունք ունի Վարկի տարեկան տոկոսադրույքը յուրաքանչյուր անգամ բարձրացնել 1 /մեկ/ տոկոսային կետով, եթե ժամկետանց պարտավորությունը (չվճարված վարկի գումարը և/կամ տոկոսագումարը կամ դրանց հանրագումարը) գերազանցում է 10.000 /տասը հազար/ ՀՀ դրամը:

Վարկառուի կողմից Բանկում և/կամ այլ բանկերում և/կամ վարկային կազմակերպություններում սուբյեկտիվ դասակարգմամբ վարկային պարտավորություններ

ունենալու դեպքում Բանկն իրավունք ունի վարկի տարեկան տոկոսադրույքը միակողմանիորեն բարձրացնել և սահմանել մինչև Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը: Վարկատուն ծանուցում է սույն կետում կատարված փոփոխության մասին Վարկառուին՝ փոփոխությունից հետո 7-օրյա ժամկետում:

Սույն կետով սահմանված կարգով տոկոսադրույքը բարձրացնելուց հետո Բանկն իրավունք ունի Վարկառուի դիմումի հիման վրա միակողմանիորեն իջեցնել տոկոսադրույքը, եթե տոկոսադրույքի բարձրացումից հետո 6 /վեց/ ամիս անընդմեջ Վարկը մարվել է առանց ժամկետանցումների:»:

Հաշվի առնելով, որ փոփոխությունները բարելավում են Վարկառուի դրությունը, սույն օֆերտայի պայմանները համարվում են ընդունված և հաստատված վարկառուների կողմից վարկային պայմանագրի ժամանակացույցով սահմանված հաջորդող մարման կատարման պահից: Այդ պահից վարկային պայմանագրի փոփոխությունն ուժի մեջ է մտնում և կիրառելի է վարկառուի նկատմամբ: